թիւն, և հաստատել զկարծիս քաղաքապետին, և նա արար դքննութիւնն 'ի ձեռն հաւատարմաց իւրոց, և եկեալ պատմեցին առաջի նորա, թէ զանկեալ քարինս միայն եղեալ են 'ի տեղիս իւրեանց։ Բարկացեալ դատաւորին առաքեաց զարս առ քաղաքապետն արձակել զգործաւորսն, և հրամայեաց Դաւթի երթալ և կատարել զգործն, ՉՂՂ (1590)։

Ի սմին ժամանակի փականք դրան Եկեղեցւոյ գերեզմանի Ս. Աստուածածնին էին 'ի ձեռս այլազգեաց, և կոչէին դռնապանք, յաւուր միում անկաւ խռովութիւն 'ի մէջ նոցա, զի Շեյխ Սալէհ ումն առաջի արարեալ թուղթս ինչ հակառակէր թէ միայն ինքեան սեփհական է ծառայութիւն Ս. Գերեզմանին։ Լուցանել զկանթեղս և զաշտանակս՝ այլովքն հանդերձ։ Իսկ ընկեր նորին Շեյխ Նուր էդդին, պնդէր զհակառակն, թէ պաշտօնդ այդ յանձն է քրիստոնէից բնակելոց յԵրուսաղէմ, և ոչ երբէք անկեալ է 'ի ձեռս այլազգեաց։ Եւ 'ի գրգռիլ վիճմանց՝ կոչեցին զԴաւիթ Պատրիարքն Հայոց, եւ զթարգմանն Լատինաց Հաննա որդի Եադուլայ եւ զայլս 'ի քրիստոնէից։ Նուր էտտին կացեալ առաջի դատաւորին յայտ արար բազմութեան ժողովելոց անդր, և ասէ, պաշտօնեայք և լուսաբարք կանթեղաց գերեզմանի Ս. Կուսին, են քրիստոնեայք մինչեւ ցայսօր, եւ ոչ ոք ունի իրաւունս հակառակելոյ այնմ։ Տեսեալ Սալէհի թէ ոչ կարաց շահել ինչ, ինքն եւս յակամայս խոստովան եղեւ թէ արդարեւ այդպէս է, և ոչ կարեմ յափշտակել 'ի ձեռաց նոցա, եթէ էր 'ի ձեռս այլազգեաց, իրաւամբ պահանջէի զլուսարարութիւն գերեզմանին։ Եւ 'ի դադարիլ սոցա 'ի բանից՝ խնդրեցին քրիստոնեայք արձանագրել 'ի դատարանի զամենայն բանս զոր խօսեցան այլազգիք յատենի անդ։ 'ի ԼԷ Ռամազան ամսոյ, ՉՂՂ (1590)։